ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 58-Լ

«29» 06 2023 թ. ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 105-ԱՄՅԱԿ» ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԵԴԱԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության 105-ամյակի կապակցությամբ հոբելյանական մեդալի նկարագրությունը և վկայականի ձևը հաստատելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և 52-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Դատախազներին, դատախազության գործունեությանն օժանդակող անձանց խրախուսման ներկայացնելու և խրախուսելու կարգը սահմանելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի հունիսի 19-ի N 36 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2018 թվականի ապրիլի 11-ի N 31 հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հաստատել «Հայատանի Հանրապետության դատախազության 105-ամյակ» հոբելյանական մեդալի նկարագրությունը և վկայականի ձևը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության

դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հավելված
ՀՀ գլխավոր դատախազի
«29» 06 2023թ.
N58Հրամանի

«Հայաստանի Հանրապետության դատախազության 105-ամյակ» հոբելյանական մեդալի նկարագրությունը

Ձև	Նկարագրություն
«Հայաստանի Հանրապետության դատախազության 105-ամյակ» հոբելյանական մեդալ   	«Հայաստանի Հանրապետության դատախազության 105-ամյակ» հոբելյանական մեդալը բաղկացած է երկու մասից՝ բլոկ կախիչից և դրան ամրացված մեդալից: Կախիչը պատրաստված է թեթև մետաղից, ունի հնգանիստ բազմանկյան ձև, չափսերը՝ 39x27x39x24x24մմ: Կախիչը հակառակ երեսում ունի հատուկ ամրակ՝ հագուստին ամրացնելու համար: Մեդալը կլոր է՝ 40մմ տրամագծով, պատրաստված 3մմ հաստությամբ կաղապարային լիցք ցամ նյութից և ոսկեպատված է 999 հարգի ոսկով: Դիմերեսին՝ կենտրոնական շրջանագծի մեջ պատկերված է ՀՀ դատախազության զինանշանը՝ էմալապատված եռագույն էմալով, ներքևի մասում՝ դափնեպսակ, շրջապատված էմալապատ եռագույնով, որը եզրափակվում է զարդանախշով, իսկ մեդալի դարձերեսին «105 Ամյակ» գրառում և ուղղանկյուն շերտիկ՝ եռանիշ հերթական համարը գրելու համար՝ ըստ հաստատված էսքիզային նմուշի:

«Հայաստանի Հանրապետության դատախազության 105-ամյակ»
հոբելյանական մեդալի վկայականի ձևը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 105-ԱՄՅԱԿ  N_____	ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ----թ. .....(ամիս, ամսաթիվ) թիվ ..... հրամանով անուն _____ հայրանուն _____ ազգանուն _____ պարգևատրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 105-ԱՄՅԱԿ» հոբելյանական մեդալով ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ .....(ստորագրություն և կնիք)